

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ
ՊԱՏՄԱԿԱՆ ՀԵՏԱԶՕՏՈՒԹԻՒՆՆԵՐ

(Շարք. տես թաղմամբ/էսլ 1930, էջ 449)



Ի՞նչ օգտուելի է Հայաստանն Ատրիկէն

Է. Ասորիք սահմանակից եղած չէ Հայաստանի՝ հաւասար Ասորեստանի և Պարսկաստանի։ Միջանկեալ եղած է Միջագետք Հայոց և անջատուած բուն Ասորիքէն։ Սակայն Հայոց Միջագետքի բնակիչներն զուտ Հայեր եղած չեն. դարերու ընթացքին հետ պատերազմներ և գաղթականութիւններ խառնեւ են իրարու հետ զանազան ազգութիւններ։ Եւ որովհետեւ Միջագետք Հայոց, շատ հեռու էին կեդրոնական Հայաստանէն, Այրարատեան աշխարհէն, հոն Հայ լեզուն անմշակ ֆալսով, մօտաւոր ազգի զարգացման ենթարկուեցաւ և տիրապետող լեզուն դարձաւ ասորերէնը։ Ասորիքի ազդեցութիւնը մեծ եղաւ քրիստոնէական շրջանին, ուր կանուխ մտաւ Առաքելոց և անոնց հետեւողներու քարոզութեամբ, որովհետեւ զրեթէ նոյն լեզուն կը խօսէին Ասորիք և Հրեայք։ Քրիստոնէութիւնը թէպէտ Միջագետքէն ծաւալեցաւ Հայաստանի ստորին աշխարհներու մէջ, բայց չկարողացաւ թափանցել և գրաւել Հայաստանի սիրտը, այդ առաքելական պատին արհուսեալ շրջանը։ Լուսաւորչին։

Քրիստոնէութիւնն երեք դար ասորա-
կան ազդեցութիւնը պահեց Հայոց Միջա-
գետքի վրայ, և երբ Հայաստանն իսկ լու-
սաւորուի, Տարօնի մէջ մինչեւ եօթներորդ
դար պիտի մնան «Ասորի կրօնաւորներն»
առանց փոխելու լեզու և ծէս:

Բուն Ասորիք Միջինն եւ Սասորինն՝ հե-
թանոս ճարտարապետութեան կոթողներն
շոյալօրէն կը պարզեն մեր աչքի առաջ
Պալմիրայի, Բոստրայի, Պետրա քաղաքի
հոյակապ աւերակները, և մարդ չէ կա-
րող չզարմանալ և չյափշտակուիլ և խոս-
տովանիլ որ նման բաներ ի զուր է փըն-
տել Հայաստանի հողին վրայ։ Ունին
այո՛, Գառնոյ Տրդատոյ Սարաւոյթ կոչ-
ուածը¹, նա զուտ յունական արուեստ է,
որ մի անգամ եղած է, և ուրիշ չէ կըրկ-
նուած. ուստի փաստել այդ մասին առ
այժմ աւելորդ թուի, կը պակսին համեմա-
տութեան եզերքները։ Եթէ Հայք մի ուրիշ
չենք չկառուցին, բայց մի բան գէթ սոր-
վեցան այդ վարպետ արուեստաւորներէն,
որոնք օգտագործեր են տեղական շաղարի
քարը և կառուցեր են, նոքա կտրել են
դրանք, հայ բանուորը կամ քարագործը
որ անոնց ձեռքի տակ աշխատել է, սոր-
ված է կտրելու արուեստը (stéréotomie)
և տաշելուն, որ մեծ դեր է խաղում ճար-
տարապետական արուեստի մէջ։

Այս նկատողութիւնն անոր համար բրի,
որ մի խտաւայի ճարտարագետ, Յ. Բիւլո-
յերա, սքանչացաւ. Հայաստանի եկեղեցի-

1. Ուրիշ տեղ բնակ են Եւրոպայի Հարաւարտեւ
Չէրեւր կառուցանելու կանոններն և գիտութիւնն յաւ

ներու քարերուն կտրուածքին և շարուածքին վրայ. իբրեւ միակտուր տախտակ կանգնեցուցած են պատերն: Ուրով հայ քարագործն այլեւս պէտք չունէր հետեւելու ոչ պարսիկ և ոչ ասորի քարագործին, նա մանաւանդ քրիստոնէական շրջանին, ինչպէս շեշտած ենք Վահանի դէպքում: Պէտք է ի նկատի առնել նաեւ քար տաշելու եղանակն որ Հայոց մէջ բոլորովին տարբեր է յոյն արուեստէն. այս տարբերութիւնն յառաջ կու գայ գույնէ քարի տեսակէն և որակէն. հայը սորի վրայ փոխանակ ևեղարկրան գրիչի՝ կը տաշէ կակուղ քարը լայնարկրան գրիչով (տեղացիք տարադ կ'ըսեն). իսկ յոյնն նստած՝ որձաքարն կը տաշէ նեղաբերան գրչով. եղաւ երբեմն որ կիւմրիի քարագործներէն երկու կտրիճներ Հայ և Յոյն մրցութեան կ'ելլեն՝ թէ ո՞վ նոյնաչափ քար մը աւելի շուտ կընայ տաշել. ի միասին կը սկսին և ի միասին կ'աւարտեն, քաջ ընդ քաջ ելեայ երկուքն ալ կը մնան յաղթական:

Բ. Հասկանալի է միշտ որ գեղարուեստի փոփոխությունն հեռուէն կամ մօտէն ամէն ազգի մէջ կըլած է, և ոչ ոք կրնայ պարծիլ թէ իւր զրացիին ճարտարագիտութենէն օգտուած չէ. սակայն քննադատելու ժամանակ պէտք է շեշտել այն ինչ որ իւրաքանչիւր ցեղի և ազգի առանձնայատուկ է, այսպէս ճարտարապետական կարգերն կը բաժնուին Գոթական, Յունական, Կորնթական, Տոսկան եւայլն. որոնց զանազանութիւնն ինչ ինչ մասերու մէջ է ընդհանուր ճարտարապետական կանոններէն¹, որ հաւասար է ամէն տեղ և ամենի մօտ. նմանապէս Հայ քարագործներն ընդհանուր գծերով կերտած ժամանակ, իրենց իրենց հանճարէն մտցուցեր են փոքր կամ մեծ նորութիւններ թէ յատկազօհրու (planimétrie) եւ թէ հաւասարակշռութեան մէջ (statique), որով

կարեւրի չէ ըսել որ «հայ ճարտարապետութիւնն ամէն ինչ կը պարտի Ասորիքին»։ Մենք պիտի տեսնանք յետոյ «Հայն թէպէտ ածու փոքր եղած է», սակայն իրեն մէջէն ալ եղած են գլուխներ, որ մեծերու չմտածածը հանճարեր և գործադրեր են, որու պաշտպանութիւնն ըստանձնելու է Ստրէկովսկի բազմահմուտ և անկաշառ ճարտարապետն, իւր փառաւոր հարցականով. «Արեւիկք քէ Հոմ եւ առկախ կեդրոնական գմբէթի ստեղծողն...

Տակաւին դեռ փոքր միւս եւս զբաղինք
հին Ասորիքով թերեւս մեզի նպաստաւոր
տուեալներու հանդիպինք, որք կրնան մը
պացուցանել թէ Հայն ստրուկ հետեւող մը
եղած չէ բնիկ ասորի ժողովրդեան, այլ
ընդհակառակն նա տուեր է սկամայ իւր
աջակցութիւնն այդ երկրի զարգացման
չափ դարեր յառաջ Ն. Ք. տարագրուե-
լով Ասորեստանցիներէն Ասորիքի անա-
պատներու խորը։ Դէր-Էլ-Զօր առաջին
անգամը չէր տեսնար 1915ին Այրարա-
տեան շախարհին զաւակները տարագրու-
ած այդ անապատներու մէջ մեռնելու
համար, և սակայն հակառակը պատահե-
ցաւ. Հայը չստեց իւր չորսհազարամեայ
արիւնին և այդ անապատները ծաղկեալ
անդաստաններու վերածեց, զարթուցանե-
լով զարմանք, նախանձ և հալածանք
տեղացիներու մէջ։

Այսպէս պատմական հանելուկ մը, որի
առջեւ բազմահմուտ Ռընան կասեցաւ լու-
ծելու համար, հոս կ'ուզենք մօտեցնել Հայ
ցեղին, կապելով զայն նախապատմական
բռնի տարագրութեան մը հետ, որ քաղա-
քակրթութեան գործիչ մ'եղաւ հզօր եւ
իրաւուն թշնամի ազգերու միջեւ:

Ապահով Արաբիոյ մէջ անյայտ ժամանակներուց բնակութիւն հաստատած է ժողովուրդ մը Նաշտահան (նպատեան ?) կոչուով, որք ըստ սմանց խմայելացիք

1. Զոր օրինակ վճենաիկ Ս. Մարկոսի հրապարակի վրայ Սանտովին ճարտարապետն կառուցեր է հայկապ ապարանք մը, որոյ զեանալարիկ կամարները վրայ դրած է մի դրուագած զօանի ե ապա շրջանակն, հակառակ սո-

Վերաբերյալ նրա շարժումներին պետք էր դնել կամայինընկերվել վերադառնալու ահա մի հորոքովիւս կը համարուի ճարտարականութեան մէջ, Հայերն ալ ունին ասոր հման հորոքովիւսները։ Ուրիշ տեղ պիտի յիշենք։

էին, ըստ այլոց Քաղաքէն—Ասորհաստանեան տիրապետողները, հիւսիս արեւելեան երկիրներէն փոխադրել են զինու զօրութեամբ այդ ժողովուրդի նախապապերը, համարեա թէ Ուրարտացիներ և Մարաստանցիներ եղած լինին. հոն տարեր բնակեցուցեր են իրբեւ անընկճելի ապստամբներ : Մենք հակեալ ենք ենթադրելու իբրեւ լաւ երկրագործ և վաճառական ժողովուրդ մը, Հայուն պէս, որ կարող էր բնատուր ձիրքերով բարւոքել անապատը և Բաբելոնը կապել Եգիպտոսի հետ: Արդարեւ նոքա իրենց նոր հայրենիքին մէջ հաստատուելով դարձան կեդրոն հաղորդակցութեան և վաճառաշահութեան նախ Եգիպտոսի, այսինքն Միջերկրական ծովուն և Միջագետքի աշխարհակալներու միջեւ, յետոյ Եւրոպիոյ և Ասիոյ՝ Մակեդոնական և Հռոմէական տիրապետութեան ժամանակ: Նաբատացիներու կոչտուրակսն տիրապետութիւնը նուաճեց արամէական կեդրոններն, և հասաւ շփման հետ մտաւ Միջագետքի Հայ ցեղապետներու հետ. հոն հիմնեցին Ուռ քաղաքը գրեթէ անապատ տեղ, բարակ ջուր Սիրտոս գետակի վրայ ի յիշատակ Քաղաքաստանի Ուռ քաղաքին որ եղած էր կեդրոն քաղաքական ուսմանց: Սա եւս նոյն մտքով շինուած է և հինէն զանազանելու համար տիրող տարրի անունով կոչեր են Ուռ—Հայ, Հայոց հետ հին ազգակցական աւանդութիւն մը ունենալու էին: Այդ տեղ հաստատուեցաւ վաճառականութեան կայարան. Հայաստանի բերքերն՝ է որ Եփրատ գետի, և է որ ցամաքի վրայով կը հասնէին մինչև Արեգ քաղաք (Սամուսատ) անկից Ուռ—Հայ և կը տրեւի Միջագետքի անապատը, կ'անցնէին Մծբինէն կը հասնէին Նինուէ: Հռոմէական բանակներն այդ ճամբաները կը կտրէին Պարթեւաց և Պարսից պատերազմներու ժամանակ. Կրասոսի բանակն այդ անապատի մէջ ջարդուեցաւ. այնուհետեւ վերջին զօրավարներն զգոյշ գտնուեցան և Հայոց Միջագետքէն չէին հեռանար, և զթշնամին հրապուրելով կը բերէին մինչեւ Ասորիքի սահմաններու մօտ ուր ռազ-

մագիտութեամբ դիւրաւ կը յաղթէին.
այսպէս Վինդիտիոս Բակուր իշխանը գրե-
թէ թաղարգի մէջ ձգեց և յաղթեց Պար-
թեաւց:

Սեւեւեւեւեւեւեւ թագաւորներու տիրապե-
տութեան ժամանակ, Ասորեստանցիներէն
մնացած Ուռ սնունը Սեւեւեւեւ Նիկատոր,
ինչպէս կ'աւանդեն Ալալիանոս և Ստե-
փան Բիւզանդացիին, վերաշինելով քաղաքը
303 թուականին Ն. Ք. յիշատակով Մա-
կեդոնիոյ մայրաքաղաքին՝ Եղեսիա կոչեց,
և զօրքերու շատն տեղաւորելով Մծբնայ
և միւս քաղաքներու մէջ, այդ կողմերուն
Միկրոնիա անունը տուաւ, որ Մակեդո-
նիա ըսել է։ Իսկ Անտիոքոս Գ. կամեցաւ
փոխել և կոչել «Կալլիբոյէ» տեղւոյն
աղբիւրներու համար, որուն կը վկայեն
և դրամները. բայց ժողովուրդին ընդու-
նելի չեղաւ և շարունակեց կոչել Եղեսիա։
Խաչակրաց ժամանակէն ասդին՝ ժողո-
վուրդի բնազդը վերականգնեց հին անունը
Ուռ-Հայ և շարունակեց մինչեւ ներկայ
ժամանակներս։ 1915ի ջարդերու ժամա-
նակ Ուռ-Հայի հայերն, որոնց երակնե-
րուն մէջ կ'եռար Ուրարտական արիւնը,
հերոսական դիմադրութիւն դրին թուրք
վոհմակներուն, մինչեւ որ գերման հրա-
նօթները զանոնք թաղեցին կենդանի իրենց
տան փլատակներու տակ։

Վաղ ժամանակներից Հայերը շատ մեծ դեր խաղացած են Եդեսիոյ ճակատագրի մէջ։ Ըստ Ասորոց ժամանակագրութեան մինչեւ 136 տարի Ն. Ք. Ստորին Հայոց թագաւորներուն կը հպատակէին, ապա ազատութիւն գտան՝ հայազգի Խոսրով անունով Սատրապի մը ձեռքով, և Ոսրոյենաց (Խոսրոյենաց) թագաւորութիւն կոչուեցաւ։ Ասորիքի ժողովուրդն անճարակ թագաւորներու երեսէն շատ նեղութիւններ կրեց, և երբ տեսաւ Մեծն Տիգրանի զօրանալը, կամաւոր կերպով հրաւիրեց զանի և հպատակեցաւ անոր թագաւորութեան՝ մօտ 25 տարի։ Խնամք ցուցած է նա Եդեսիոյ վրայ, ուր տեղաւորած է յոյն վարդապետներ ուսմանց և հիմնած իմաստասիրական դպրոց մը, որոնք պիտի ծաղ-

կին հետագայ դարերում: Տիգրան հռա-
տեսութեամբ ուզեց քաղաքանապէս բաժ-
նըւած Ստորին Հայոց Միջագետքը Եդե-
սիա քաղաքով, գիտութեան միջոցով կա-
պել Վերին Հայաստանի հետ: Աստ ուրեմն
Դանիէլ Ասորի (?) ասորախօս հայերն
համար պիտի աշխատի զիր ստեղծել, դա-
իսկ կը մատնէ անոնց հայ ծագումն ու-
նենալուն և դրա համար զիւրահաւանու-
թեամբ Վռամշապուհ և Սահակ կը փու-
թան զրկել զՎահրիճը, ապա Հաբել և
Մեսրոբ որ պիտի ստուգեն թէ վաղնջուց
մնացած հայ զրեր են Դանիէլիւններն և
գործածութենէ դուրս ձգուած և մոռցուած,
այն պատճառաւ որ Սեւեկեան տիրապե-
տութեան ժամանակ յոյն և ասորի լեզու-
ները բոլորովին խեղդեցին հայերէնը: Եդե-
սիա Ասորի և Հայ երկու ազգութեանց
մայրաքաղաք դարձաւ Հռոմէական տիրա-
պետութեան ժամանակ, միացած Մոփաց
աշխարհի և Կապադովկիայի հետ, եր-
կորդ դարուն իսկ սկսած էր երեսելի
հանդիսանալ իմաստասիրական դպրոցով,
յունականին հետ շաղկապելով հին քաղ-
դէական գիտութեանց ուսումը: Այդ հա-
մագլական դպրոցի ազդեցութիւնն, Եփ-
րատի և իւր օժանդակ գետերու ուղղու-
թեամբ հասաւ զրաւեց Գամիւրը, Կապա-
դովկիա և Բարձր Հայք, զորս ի միասին
կապեց քրիստոնէական կրօնքը շնորհիւ հին
աւանդութիւններու, անոր համար պրոֆ.
Մարկուարտ Ս. Լուսաւորիչը Կեսարիոյ
դպրոցի քրմական ցեղերու սերունդէն կը
համարի, որք տարածուեր էին Հայոց մէջ,
Եկեղեցաց գաւառում և Տարօն, քրիստո-
նէութենէն շատ առաջ:

Ժ. Եղեախոյ դպրոցին կը պատկանի Բարդաճան որի մասին Ասորի մատենագիրը՝ Ներն, Միքայէլ և Թէոդոր Բարխուճի կ'ըսեն որ Պարսիկ էր: Իսկ Յ. Ալիբեկյանոս որ ժամանակակիցն էր և ծանօթ, ուզղակի Պարսթեւ կը կոչէ: Միջագետքի հայերն ինքզինքնին Պարսթեւ կը կոչէին քան թէ Հայ. երկու թագաւորներու պատճառաւ, Վաղարշակին որ Պարսթեւ էր որու մայրաքաղաքն էր Մծբին և Մեծն Տիգրանին որ

նոյնպէս Պարթեւ կոչումն ունէր և շինեց զՏիգրանակերտ, երկրորդ մայրաքաղաքը Միջագետաց Հայոց։ Այս մտայնութեամբ ինչպէս հիմա Ամերիկացի բնակ անգլիացիներն, չեն ուզեր կոչուիլ մայր երկրի անունով, ամէն ոք առաւել կը սիրէ իւր ծննդավայրն և այն է անոր հայրենիքը։ Իսկ Պորփիրու կը համարի ծագումով Նաբատացի, որոնց մասին ասացինք որ թերեւս Հայաստանի հին ուրարտական կամ արիական սերունդներուց իջած ըլլան, և ասոնց կը վերագրուի Եդեսիոյ քաղաքի շինութիւնն, որ պարթեւազն ցեղի մը Ուրոյենաց մայրաքաղաքն եղաւ։ Այս կարծեաց նպաստաւոր են Ս. Իպպոլիտոսի ասածն, որ ի շարս աղանդաւոր իմաստասիրաց կամ Գնոստիկեանց զանի ուղղակի հայազգի կոչէ։ Վասն զի Հայոց Միջագետքի մէջ ծնած էր, վասն զի թագաւորական տան հովանաւորութեամբ դաստիարակուեցաւ, վասն զի հայրն քրմութեան պաշտօն վարած է այդ քաղքին մէջ, նոյնպէս և ինքն քրիստոնէութենէ յառաջ վարժած էր խորապէս քաղդէական ուսմունքներով։ Իպպոլիտ նորա անունը և ազգութիւնը ի միասին կու տայ. «Արդիս սիսակիս հայր», ձայն մը որ մօտ է հայ Արտաշէսին։ Իպպոլիտ կարդացեր է Յուլիոս Ափրիկանոսը, որով իրեն ասածն հաւատարիմ կրնայ լինել, և ապահով քան ասորի պատմիչներու ասածը, թէ Բարդաժան հայազգի էր։ Հռոմայեցի հեղինակներ խօսելով Հայոց Միջագետքի վրայ, զՀայերն՝ հայ անունով կը կոչեն և ոչ Պարթեւ, ասոր համար Իպպոլիտ կը հետանայ Ափրիկանոսէ չ'ասեր Պարթեւ այլ հայազգի։ Արդարեւ Բարդաժան իբրեւ ցեղակից զիցանուէր Բագրատունեաց, պէտք է ծանօթ եղած ըլլայ Անիի քուրմերուն, որ կը զիմէ իբր քրիստոնէութիւն քարոզելու, անյաջողութեան պատահելով, ձեռք կը զարնէ, ըստ Խորենացւոյն մեհենական պատմութիւններ կարգալու, և կը գրէ պատմութիւն մը Արտաւազդ Բ.ի օրերէն մինչեւ իւր ժամանակի եղած պակասը լրացնելու համար։ Մեզ անհասկա-

նալի պիտի մնար Բարդաճանի այս փութ-
կոտութիւնն Հայոց Պատմութեան մի բա-
ցաւն լրացնելու, եթէ ինքն անձնական և
ցեղային շահ մը չունենար, մանաւանդ
որ իւր գրածն աւելի քրմական բովան-
դակութիւն ունի: Մանաւանդ որ զիւր աշ-
խատութիւնն ասորերէն գրած է Եղեւսիայի
արքունի դիւանի մէջ պահուելու, իբր տոհ-
մային զրոյցներու մի մասն:

Ըստ մտաց խորեհնացու իսկ նա հայ
մ'է. այն հայերուց, որոնք Գ դարէն մին-
չեւ Ժ դար լուսաւորեցին Յոյն-Հռոմէա-
կան աշխարհն, լոկ անուն մը կտակելով
իրենց հայրենի հողին: Այս և ասոր նման
ասորահայեր զարգացուցին և պայծառա-
ցուցին իրենց հանճարով ասորի գրակա-
նութիւնն և անկից անբաժան գեղարուե-
ստը, որպէս զի վերջին ժամանակներս զէնք
մատակարարեն ուսումնասիրողներու թէ
Հայ գեղարուեստն ըստ ամենի պարտի Ա-
սորիքին: Բարդաճան (եկեղեցական) երգե-
րու հեղինակ եղած է. գուցէ Անիի մէջ սոր-
վեցուցած լինի քուրմերուն եղանակներ,
որոնք յետոյ փոխանցեցան այժմեան Շա-
րականաց ութ ձայներուն: Ս. Եփրեմ ան-
շուշտ խափանեց Եղեւսիայի մէջ անոնց
շարունակութիւնը, վասն զի այժմու Ասոր-
ւոց եկեղեցական երգերն բազմօր կը տար-
բերին Հայաստանեայց եկեղեցւոյ երգե-
րուց:

Բ և Գ (154-222) դարուն այդ դպրոցի
ամենափայլուն աստղը կը հանդիսանայ
Բարդաճան՝ ինչպէս վերը յիշեցինք: Գ
դարուն Ծոփաց աշխարհէն էր անուանի
Պրոյերեսիոս Հայկազն ալ. ասոր հայ լի-
նելը պիտի չգիտնայինք, եթէ մեզ չասէր
Ս. Գրիգոր Նազիանզացին, որ իւր մասին
իսկ ի զարմանա յունաց, իւր նամակնե-
րէն միոյն մէջ առ Ս. Բարսեղ, կը յայտնէ
որ իրենց նախնիք Հայաստանէն եկած են:
Եւ գուցէ Բարդաճանեաց ցեղէն:

Հայոց պատմութիւնն իսկ կը նպաստէ
այս կարծեաց: Բարդաճանեաց ցեղն խոր-
հրդաւոր դիրք պահած է յընթացս Հայ
պատմութեան, քրմական կնիք կը կրէ, իբր
աստուծոյ նուիրուածներ, սպասաւորներ:

Վաղարշակ զՏորք Հայկազն արեւմտեան
կողմին կուսակալ կը կարգէ, Բարդաճան-
նիք կը ծաւալին Միջագետքէն մինչեւ
Կապադովկիա մինչեւ ի Սպեր, Բարձր և
Գ. Հայք: Այդ ճիւղն կանուխէն կ'ընդունի
քրիստոնէութիւն, և պատճառ պիտի տան
կարծելու ութերորդ դարուն՝ քաղաքական
պատճառներու համար, որ նորա հրէա-
կան սերունդէ են: Նմանապէս Լուսաւորչի
խնամական կամ ազգակցական կապերը
կը ձգուին Եկեղեաց գաւառէն մինչեւ ի
Մծբին, Արշակունեաց և Հայոց հին մայ-
րաքաղաքը: Տիգրան այդ երկու քաղաք-
ները՝ Մծբին և Եղեւսիա՝ Հայաստանի
հետ կը կապէ, որ Տաւրոսի գոտիէն այն
կողմը իւր կռնակն ունի Տուրուբերան
Ռարտացուոց անուանի աշխարհն ուր է
Տարօն գաւառն և ի նմա ասորախօս հայե-
րու մի նշանաւոր հաստատութիւն, քրմա-
կան տուն մը յԱշտիշատ: Սոցա համար
Ձենոր կ'ասէ որ թխագոյն էին: Որպէս
և ուստի էին այդ թխագոյն մարդիկը:
Այդ թուի գոյնին համար ըսուած են ձեղիկ,
որով կարծուի թէ Հնդկաստանի կողմե-
րէն եկած ըլլան: Այդ փոքրիկ գաղութի
մինչեւ այդ տեղ գալն, այնքան հեռաւոր
աշխարհներուց գրեթէ անհնարին կը թուի:
Իսկ եթէ միտ դարձնենք Եղեւսիոյ վրայ,
հոն կը գտնենք թագաւորական տան մը
(Բարդաճանի?) անձինք որ Արշամ կամ
Արշամ անուն ունին, որ թուի կը նշանակէ
և խնամութեամբ ալ կապուած են Պարս-
կաստանի Պարթեւ տան հետ. միթէ աւելի
շուտ կարելի չէ՞ ասել որ Աշտիշատու
քուրմերը Եղեւսիոյ թագաւորներու սերուն-
դէն լինին և գրաւեր են թագաւորավայել
տեղուանք, որու համար Մարդաբտն ճաշ-
կերոյթէն յետոյ, անոյշ գինիով քաղցուա-
լից, Արշակունեաց ազգի ու ցեղի և տակի
նախատինքներ կը թափէ, որովհետեւ Տըր-
դատ այն հրաշատեսիլ տեղերը տուած էր
եկեղեցականաց, կանանցազգեստ մարդ-
կան. թէպէտ քաջապէս կոուեցան Տըր-
դատի զօրքերու դէմ և պարտուեցան, բայց
քրիստոնէութիւն ընդունելով մնացին դար-
ձեալ տէր իրենց սեփականին: Բիւզանդ

ասորահայ մ'է, յունամոլութեան համար
ազգութիւնը կ'ուրանայ. սակայն այդ նը-
ւաստացուցիչ պարագան կը բարձրացնէ
նրա պատմութեան յարգը, որովհետեւ
կրցեր է անկախ կերպով գրել այլոց պատ-
մութիւնը, բացի Մամիկոնեան տան շողո-
քորթութենէն: Շատ ուշագրաւ է նաեւ նրա
պապանձումն Ս. Սահակի նկատմամբ: Ս.
Սահակ շատ երես տուած չէ այդ ազգու-
րացներուն և հայրենի յարկը թողնելէն
վերջ, քահանայ, եպիսկոպոս, կաթողի-
կոս օծուելէն զկնի, պաշտօնական ոչ մի
այցելութիւն ըրած է Աշտիշատու արեւ-
դաներուն, զորս Բիւզանդ թաց ու չոր
ի միասին կը սքանչացնէ: Ս. Սահակ հա-
ւածանքի նեղ օրերուն անգամ չմտաբե-
րեց առանձնանալ հոն, այլ ի Բլուր գիւղն,
ուսկից մահուանէն յետոյ իւր ձեռասուն
աշակերտներն, միայնակեցական կարգէ,
զորս ինքն հաստատեր, ուսուցեր էր և իւր
հետ կը շրջէին հանապազ, որոնք կը զըր-
գոէին Ս. Կարապետի ասորախօսներու
նախանձն և չարակնութիւնն, տարան
զինքն Աշտիշատ յիւր սեփական գիւղն
և հանգուցին իւր Հարց շիրմին մէջ:

Հազիւ մի ակնարկութիւն կայ Ս. Մես-
րորի հօր մասին, այլ այն էլ անշուշտ չա-
րամտութեամբ նուաստացնելու մեծ Լու-

սաւորչի պատիւն, որ չկարենայ բարձրա-
նալ, ըստ եկեղեցական կանոնաց, քահա-
նայական և եպիսկոպոսական աստիճա-
նին, երբ կոչէ զնա Պապայ հարճորդի,
որ կոչէր Վրիկ, այսինքն՝ վարդանիկ-
ինչպէս, օրինակի համար, այժմու Հայերն
համառօտելով և կրճատելով Համազասպը
= Համօ, Գէորգը = Գեւէ. Կարապետը =
Կրպօ կը կանչեն:

Այսչափ մեր թարթափելը, ըստ երե-
ւոյթին կարծես նիւթէն դուրս, անոր հա-
մար էր որ, յիշեցնէինք մեր բարեկամ-
ներուն թէ հեթանոսութեան շրջանին Վե-
րին Միջագետքի Ասորիք կրէր են առա-
ւել Հայ ազգեցութիւն և քաղաքակրթու-
թիւն քան փոխադարձը: Հայերը սեփա-
կան գիր չունենալով, ակամայ կերպով
իւրացուցեր են Յոյն և Ասորի դպրու-
թիւն, և որքան Բարդաճաններ, Պրոյե-
րեսիոսներ, Ղուկիանոս քահանաներ կորու-
սեր ենք, որոնցմէ այժմ ոմանք կը հանդի-
սանան կամ Ասորի և կամ Յոյն, ընդ որս
դասելու էինք նաեւ թագազուլիս Արտա-
ւազդը, եթէ Պուտարքոս մեզի պահած
չըլլար անոր հայ գրագէտի յիշատակը:

(Շարունակելի)

Հ. Գ. ՆԱԼԱՊԵՏԵԱՆ